ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 54 (24607), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲٤٦۰۷) ٥٤ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

10 ՄԱՐՏԻ 2024

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

یکشنبه – ۲۰ اسفند ۱۴۰۲

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir

Իշխան Սաղաթելեան.

«ՏԱՒՈՒՇԻ 4 ԳԻՒՂԵՐԸ ՅԱՆՁՆԵԼՈՎ՝ ԹՇՆԱՄՈՒՆ ԲԵՐՈՒՄ, ՏԵՂԱՒՈՐՈՒՄ ԵՆ ՄԵՐ ԹԻԿՈՒՆՔՈՒՄ»

ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորները շարունակում են մարզային հանդիպումները: Հերթական հանդիպումը Արմաւիրի մարզի Արմաւիր գիւղում էր, որին ներկայ էին ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթելեանը, պատգամաւորներ՝ Լեւոն Քոչարեանը, Աղաւնի Վարդանեանը, Աննա Գրիգորեանը, Ագնեսա Խաչատրեանը, Գեղամ Մանուկեանը, Աշոտ Սիմոնեանը եւ այլք:

«Առանց չափազանցնելու մեր երկիրը կանգնած է շատ ծանր եւ նոր մարտահրաւէրի առջեւ. Արմաւիրում քաղաքացիների հետ հանդիպման ժամանակ յայտարարեց Իշխան Սաղաթելեանը:

«Այս իշխանութիւնները, ովքեր խաբելով եկան իշխանութեան ղեկին, իրենց վարած գործունէութեան արդիւնքում Արցախի հայաթափումից յետոյ Հայաստանը կանգնեցրել են ծանր խնդիրների առջեւ: Երկու տիպի մարտահրաւէր ունենք՝ արտաքին եւ ներքին: Արտաքին իմաստով թուրք-ադրբէջանական տանդեմը շարունակում է ագրեսիան Հայաստանի նկատմամբ, արդէն բացայայտ միջամտում է Հայաստանի ներքին գործերին, ոչ միայն չկայ դիմադրութիւն, այլ՝ Հայաստանի խամաճիկ իշխանութիւնները հետեւողականօրէն, շատ յաճախ նաեւ սիրով կատարում են թշնամական պետութեան թելադրանքը մեր հայրենիքում: Թշնամին գտնւում է Հայաստանի տարածքում, բացայայտ յաւակնութիւններ է ներկայացնում նոր տարածքների նկատմամբ եւ չկայ որեւէ դիմադրութիւն: Իշխանութիւնների առաջարկած բանաձեւը հետեւեալն է՝ տանք որքան ուզում են՝ յոյս ունենալով ինչ-որ մի պահի հասնել խաղաղութեան: Սա ձախողուած ճանապարհ է եւ Արցախի հայաթափումից յետոյ առնւազն, ովքեր որ յոյս ունէին, որ տանք, խաղաղութիւն կը լինի, առնւազն հիմա պիտի հասկանան, որ սա կեղծ է, տանելու է նոր փորձութեան եւ ըստ էութեան մեր պետականութիւնը դնելու է հարցականի տակ»,- ասել է նա:

Ըստ Սաղաթելեանի՝ միւս խնդիրն այն է, որ այսօր Արեւմուտքը փորձում է Ռուսաստանի դէմ նոր ճակատ բացել՝ ի դէմս Հայաստանի. «ՀՀ իշխանութիւնների վարած քաղաքականութեան արդիւնքում այսօր մեր երկիրը դարձել է ուժային կենտրոնների ազդեցութիւնների բախման միջավայր, որը յղի է ծանր հետեւանքներով: Այս պայմաններում ցաւօք, շարունակւում է ներքին պառակտումները, շարունակւում է պայքարը ազգային կառոյցների, եկեղեցու եւ ընդհանրապէս հայկական ինքնութեան նկատմամբ: Այս իրավիճակում մենք պէտք է պայքարենք թէ՛ ներքին, թէ՛ արտաքին թշնամիների դէմ»:

Սաղաթելեանը նշել է, որ անցնող երեք տարիների ընթացքում արել են հնարաւորը, սակայն չեն ստացել այն արդիւնքները, որոնք ակնկալում էին:

Arfd.am



Ասում են՝ իւրաքանչիւր առասպել աւարտւում է ֆիզիկական մահով եւ հոգեկան յաղթանակով: Պոէզիան անսահմանափակ առասպելների տարածութիւն է, ուստի հոգեկան յաղթանակներն այստեղ շարունակում են ծնունդ տալ մէկը միւսին:

Եւ հոգեկան այդ յաղթանակների գոյութիւնն է, որ կարող ես զգալ, երբ ծանօթանաս ու մտերմանաս Վարանդի ստեղծած պոէզիայի հետ:

Գրող դառնալու համար Վարանդը մեծ ջանքեր չի գործադրել: Պոէտ լինելն Աթենասի կողմից նրան տրուած շնորհ է, որը նա կատարելապէս իրացրել եւ իրացրել է, դառնալով առասպելների մեկնութեան վարպետ: Եւ առասպելների մեկնութեան գաղտնիքին տիրապետելն է, որ Պեգասի պէս նրան օժտել է ժամանակի եւ տարածութեան զրահը պատռելու եւ հարթագողի անսահմանութիւնում ճամբորդելու բացառիկ ունակութեամբ:

70-ամեակդ շնորհաւոր Վարա՛նդ: Դու դեռ պարտք ես մեզ: Վստահ եմ գիտես, թէ ինչ մասին է: Մարիր պարտքդ, եւ դրանից յետոյ միայն «հաւաքիր բոլոր գրքերդ չմակագրուած ու գնայ հեռու մի ճամբորդութեան», որի մասին երազել ես միշտ:

Իսկ մինչ այդ… ծնունդդ շնորհաւոր, Յակոբի որդի Քիւրքչեան Սուքիաս:

ԽՄԲ.

Ադրբեջանը Հայաստանից պահանջել է «անյապաղ» իրեն յանձնել 4 գիւղ

Ադրբեջանի ախորժակը բացւում է երկրաչափական պրոգրեսիայով: Բաքուն հիմա էլ Հայաստանից պահանջում է «անյապաղ» իրեն յանձնել 4 գիւղ:

Ինչպէս յայտարարում են ադրբեջանական ԶԼՄ-ները՝ յղում կատարելով Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆայեւի մամուլի ծառայութեանը, «դրանց պատկանելութիւնն Ադրբեջանին անվիճելի է, եւ դրանք ենթակայ են անյապաղ ազատագրման»:

Մուստաֆայեւի մամուլի ծառայութիւնում յայտնել են Ադրբեջանի եւ Հայաստանի յանձնաժողովների հանդիպումների մասին, որոնք ստեղծուել են պետական սահմանի սահմանազատման համար:

«Սահմանազատման գործընթացի շրջանակում կը լուծի նաեւ Ադրբեջանի 4 էքսկլաւային գիւղերի (Իւհարի Ասիփարա, Սոֆուլու, Բարիուդպլի եւ Քեարքի) ազատման հարցը, որոնք օկուպացրել է Հայաստանը»,- նշել են ադրբեջանական ԶԼՄ-ները:

News.am

Վարդան Ոսկանեան.

«Տաւուշի մարզի չորս գիւղերը մեր հայրենիքի սրբազան հողի անքակտելի մաս են»

«Բաքւի բարբարոսական վարչախմբի փոխվարչապետ կոչեցեալի գրասենեակի այսօրւայ (մարտի 9-«ԱԼԻՔ») յայտարարութիւնից յետոյ, եթէ որեւէ մէկի մօտ դեռ կասկած կայ, որ արհեստածին Ադրբեջանը «սահմանազատում» եւ «սահմանագծում» փաթեթաւորմամբ առաջ է մղում Հայաստանի հետագայ աստիճանական բռնազաւթումը, ապա նա, մեղմ ասած, մանկամիտ է»,- սոցիալական ցանցերի իր հարթակներում գրել է իրանագէտ Վարդան Ոսկանեանը:

Նրա խօսքով՝ Տաւուշի մարզում եւ Հայաստանի այլ վայրերում թշնամուն ոչինչ չի կարելի զիջել, որովհետեւ, բացի այն, որ, դիցուք, Տաւուշի մարզի չորս գիւղերը Հայաստանի սրբազան հողի անքակտելի մաս են, դրանք նաեւ կենսական կարեւորութիւն ունեն Հայաստան-Վրաստան եւ Իրան-Հայաստան-Վրաստան-Ռուսաստան ռազմավարական նշանակութեան ցամաքային անվտանգ հաղորդակցութեան առումով:

Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի ոգեկոչման յանձնախումբը հանդիպումներ է ունեցել Տ. Սեպուհ արք. Սարգսեանի եւ պատգամաւոր Արա Շահվերդեանի հետ

«ԱԼԻՔ», Կ. Դ. - Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի ոգեկոչման եւ Սրբադասած նահատակների յիշատակի մեծարման նպատակով, Թեհրանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կեանքի կոչած Կենտրոնական յանձնախումբը երէկ՝ մարտի 10-ին ազգային առաջնորդարանի դահլիճում առանձին հանդիպումներ ունեցաւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի եւ Իրանի Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանի հետ:

Սրբազան Հօր հետ հանդիպման

(Շար. 8-րդ էջում)

«Եւ քանի-քանի անգամ եմ ձեզ ասել, որ ձեր հիմնական սխալը մարդկային աչքերի նշանակութիւնը թերագնահատելու մէջ է: Հասկացէք, որ լեզուն կարող է թաքցնել ճշմարտութիւնը, իսկ աչքերը՝ երբեք: Ձեզ յանկարծակի հարց են տալիս, եւ դուք նոյնիսկ չէք ցնցւում, մի ակնթարթում տիրապետում էք ձեզ ու գիտէք, թէ ինչ է պէտք ասել ճշմարտութիւնը թաքցնելու համար, ու անչափ համոզիչ էք խօսում, ոչ մի կնճիռ չի խաղում ձեր դէմքի վրայ, բայց, աւա՜ղ, հարցից անհանգստացած ճշմարտութիւնը հոգու խորքից մի պահ թռչում է աչքերի մէջ, եւ ամէն ինչ վերջացած է: Դա նկատւում է, իսկ դուք՝ բռնւում»

Միխայիլ Բուլգակով (1891-1940), ռուս աշխարհահռչակ գրող եւ դրամատուրգ
Մէջբերումը՝ նրա «Վարպետն ու Մարգարիտան» վէպից է
Մարտի 10-ը նրա յիշատակի օրն է

ARAM®
coffee
ԱՐԱՄ
սուրճ
قهوه آرام
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Արցախի դրօշը կրկին Ֆրանսիայի հրապարակում է

Երեւանի Ֆրանսիայի հրապարակում կրկին տեղադրուել է Արցախի Հանրապետութեան պետական դրօշը, ինչի մասին «Ֆէյսբուք»-եան էջում յայտնել է ՀՅԴ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Քրիստինէ Վարդանեանը:

«Արդէն տեղում է», - գրել է նա եւ կից լուսանկար հրապարակել:

Յիշեցնենք, որ աւելի վաղ ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Գեղամ Մանուկեանը յայտնել էր, որ դրօշը հրապարակից հեռացուել է:

«Նախօրէին առեւանգել են Երեւանի Ֆրանսիայի հրապարակում արդէն երկու տարի ծածանուող Արցախի Հանրապետութեան պետական դրօշը: Իրաւասու մարմինները պաշտօնապէս հերքում են, որ որեւէ մէկը մասնակցութիւն է ունեցել դրան:

Արցախի պետական դրօշը շարունակուելու է ծածանուել Երեւանի կենտրոնում եւ առաջիկայ ժամերին այն կրկին տեղադրուելու է իր մշտական տեղում: Արցախը յաւերժ է», - գրել էր Մանուկեանը:

Ադրբեջանը շարունակում է Ստեփանակերտի ապահայկականացման գործընթացը

Ստեփանակերտի կենտրոնում գտնուող Ազգային ժողովի շէնքը Արցախի Հանրապետութեան քաղաքական ինքնութեան խորհրդանիշերից մէկն էր, ուստի պատահական չէ, որ քաղաքի օկուպացիայից յետոյ ադրբեջանական կողմը քանդեց այն: Բացի այդ, այս շէնքը իր ծաւալներով Ստեփանակերտ քաղաքի իւրօրինակ խորհրդանիշերից էր, որն երեւում էր քաղաք դեռ չհասած, երբ բացւում էր Ստեփանակերտի տեսարանը: Ադրբեջանական կողմը շարունակում է Ստեփանակերտի ապահայկականացման, Արցախի ինքնութեան եւ ինքնուրոյնութեան խորհրդանիշերի ոչնչացումը: Այս մասին յայտնում է Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկում իրականացնող monumentwatch.org կայքը:

Անդրադառնալով ադրբեջանցիների կողմից Արցախի Ազգային ժողովի եւ Ազատամարտիկների միութեան շէնքերը քանդելուն՝ կայքը գրում է.

«2023 թւականի սեպտեմբերին Արցախի տարածքի ամբողջական օկուպացիայից յետոյ սոցիալական ցանցերի ադրբեջանական տիրոյթում կարելի է հանդիպել տասնեակ տեսանիւթերի, որոնք նկարահանուել են ադրբեջանցիների կողմից օկուպացուած Արցախում: Արցախի Ազգային ժողովի շէնքի քանդման աշխատանքները ցուցադրող տեսանիւթերը համացանց են ներբեռնուել է 2024 թւականի մարտի 3-ին: Տեսանիւթերից կարող ենք տեսնել, որ Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի շէնքի ծաւալի զգալի մասը քանդուած է: Տեսանիւթերից մէկում փաստւում է շէնքի քանդման աշխատանքների մեկնարկը, իսկ միւսում՝ արդէն վերջնարդիւնքը: Արցախի Ազգային ժողովի շէնքի միտումնաւոր քանդումը պէտք է որ եղած լինի փետրուարի վերջին, քանի որ տեսանիւթերը ներբեռնուել են համացանցից մարտի 3-ին եւ 4-ին:

Ազգային ժողովի շէնքի քանդման մասին ինֆորմացիայի տարածումից յետոյ, ադրբեջանական հեռուստատեսութեամբ ցուցադրուեց շէնքի քանդման մասին պաշտօնական տեսանիւթը, որտեղ քանդման աշխատանքները մեկնաբանուեցին որպէս անջատողականութեան խորհրդանիշերի աւերում, ինչի մեկնարկը տուել էր Իլհամ Ալիեւը:

Ազգային ժողովի շէնքը կառուցուել է 2003-2007 թւականներին ճարտարապետ Համլետ Խաչատրեանի նախագծով: Խորհրդային տարիներին այստեղ էր գտնուում Ստեփանակերտի թիւ 1 միջնակարգ դպրոցը, որի ծաւալի մի մասը վերակառուցուեց եւ ներառուեց Ազգային ժողովի շէնքի ծաւալում:

Ադրբեջանական լրատուական պիքները եւս անդրադարձան այս թեմային, միայն թէ հրճւանքով՝ շեշտելով, որ շէնքը անջատողականութեան խորհրդանիշ է:

Ադրբեջանական կողմը աւերել է նաեւ Արցախի Ազատամարտիկների միութեան շէնքը, որը շահագործման է յանձնուել եւ պաշտօնապէս բացուել 2014 թւականին: Շէնքի ճարտարապետն է Անահիտ Վարդանեանը:

Արցախի ազատամարտիկների միութիւնը հիմնուել է 2000 թւականին, այն ունէր աւելի քան 10 հազար անդամ: Միութիւնը հասարակական կազմակերպութիւն էր, որի նպատակն էր միաւորել Արցախեան պատերազմի մասնակիցներին, օգնել եւ օժանդակութիւն ցոյց տալ զոհուած եւ հաշմանդամ դարձած ազատամարտիկների ընտանիքներին, աջակցել սոցիալական խնդիրների լուծմանը: Միութեան կարեւորագոյն նպատակներից էր սատար կանգնել Արցախի Հանրապետութեանը:

168.am

ԱՄՆ-ն եւ Թուրքիան պարտաւորուել են համատեղ աշխատել ՀՀ եւ Ադրբեջանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի առաջխաղացման համար

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքէնը եւ Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը պարտաւորուել են աշխատել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղ համաձայնագրի առաջխաղացման ուղղութեամբ, ասում է Վաշինգտոնում ԱՄՆ-Թուրքիա ռազմավարական մեխանիզմի հանդիպման արդիւնքներով յայտարարութեան մէջ:

«Ինչ վերաբերում է Հարաւային Կովկասին, պետքարտուղար Բլինքէնը եւ արտգործնախարար Ֆիդանը պարտաւորուել են աշխատել միասին՝ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հաւասարակշռուած եւ կայուն խաղաղութեան համաձայնագրի առաջխաղացման համար եւ համաձայնել են, որ դա կը նպաստի տարածաշրջանային կայունութեանը, համագործակցութեանը եւ բարգաւաճմանը»,- ասւում է ԱՄՆ պետքարտուղարութեան կայքում տեղադրուած յայտարարութեան մէջ:

Նշւում է, որ կողմերը քննարկել են ամերիկա-թուրքական յարաբերութիւնների ամրապնդմանն առնչուող հարցերի լայն շրջանակ՝ ներառեալ տարածաշրջանային առաջնահերթութիւնները, ահաբեկչութեան դէմ պայքարը, պաշտպանական համագործակցութիւնը, տնտեսական աճը, առեւտուրը, էներգետիկ անվտանգութիւնը եւ կլիմայի փոփոխութիւնը:

News.am

Լիլիթ Գալստեանը ԻՌՆԱ-ի հետ զրոյցում.

«Իրանի Գերագոյն առաջնորդի յայտարարութիւնը գօտեպնդող էր եւ Հայաստանի ժողովրդի համար առանձնայատուկ նշանակութիւն ունէր»

«ԱԼԻՔ» - ՀՅԴ Հայաստանի ԳՄ անդամ, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Լիլիթ Գալստեանը ԻՌՆԱ-ին տուած հարցազրոյցում կարեւորելով Կովկասում Իրանի կառուցողական դիրքորոշումներն, ընդգծած նշել է, որ առանց վարանելու կարելի է ասել, որ ժողովրդի անվտանգութեան եւ աշխարհագրութեան ու սահմանների փոփոխութեան անթոյլատրելիութեան վերաբերեալ Իրանի Իսլամական Հանրապետութեան Գերագոյն առաջնորդի յայտարարութիւնը Հայաստանի ժողովրդի համար առանձնայատուկ նշանակութիւն ունէր, յատկապէս, Հայաստանի ժողովրդին հոգեպէս գօտեպընդելու առումով:

«Իրան-Հայաստան յարաբերութիւնները հիմնուած են երկու հարեւան երկրների միջեւ երկարամեայ մշակութային, քաղաքական եւ պատմական կապերի, յատկապէս, երկու ժողովուրդների հոգեւոր ու մտաւոր ընդհանրութիւնների վրայ»,- նշել է Լիլիթ Գալստեանը եւ յաւելել, որ 1991 թւականի սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան Հռչակումից յետոյ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը առաջին երկրներից էր, որը ճանաչեց Հայաստանի անկախութիւնը, որով կողմերն անցան համապարփակ դիւանագիտական, մշակութային եւ տնտեսական կապերի խորացմանը:

Լիլիթ Գալստեանը, ով վերջերս «Հայ Դատն այսօր» խորհրդաժողովին մասնակցելու նպատակով այցելել էր Թեհրան, ԻՌՆԱ-ին տուած հարցազրոյցում կարեւորելով տնտեսական եւ ռազմավարական գործօնը, յիշեցրել է երկու ժողովուրդների բարեկամական կապերի եւ Իրան-Հայաստան բարիդրացիական յարաբերութիւնների զարգացման փաստի մասին, ինչը միւս ոլորտներում յարաբերութիւնների զարգացման կարեւոր գործօնն է:

Պատասխանելով հարցին, թէ ինչպէ՞ս էք գնահատում Իրանի գործող կառավարութեան որդեգրած քաղաքականութիւնը, որի արտաքին ճակատի առաջնահերթութիւններից է հարեւան երկրների հետ յարաբերութիւնների զարգացումը, նա նշել է, որ պատմութեան ընթացքում Իրանի եւ Հայաստանի յարաբերութիւնները միշտ եղել են փոխադարձ յարգանքով:

«Այս լաւ յարաբերութիւններն ու փոխադարձ յարգանքը շարունակուեց Հայաստանի Հանրապետութեան անկախացումից յետոյ նաեւ: Իսկ այս տարիների ընթացքում երկու բարեկամ երկրների միջեւ քաղաքական յարաբերութիւնների խորացման ականատեսը եղանք: Այս ընթացքում Իրանի եւ Հայաստանի միջեւ ստորագրուել է աւելի քան 30 համագործակցութեան յուշագիր, որոնցից մի քանիսն այժմ իրականացւում են»,- յաւելել է նա:

«Այդ համագործակցութիւնները հիմնականում սոցիալական, տնտեսական եւ մշակութային ոլորտներում են: Երկու երկրների տնտեսական յարաբերութիւնները անցեալի համեմատ զգալիօրէն աճ են արձանագրել: Սոցիալական, տնտեսական եւ մշակութային յարաբերութիւնները շատ կարեւոր են, սակայն, ցաւօք, Հայաստանի ներքին իրավիճակի եւ Հայաստանի վրայ գործադրուող արտաքին ճնշումների պատճառով այժմ Հայաստանի կարեւորագոյն խնդիրն ու առաջնահերթութիւնն իր անվտանգութիւնն ու ինքնիշխանութիւնը պահպանելն է»,- ընդգծել է Լիլիթ Գալստեանը:

ՀՀ Ազգային ժողովի պատգամաւորը նշել է նաեւ, որ վերջերս Հայաստանում պաշտօնական հարցում է անցկացուել, որով մարդիկ այն հարցին, թէ ո՞ր երկրներն էք համարում Հայաստանի բարեկամ երկիր, առաջին եռեակում նշել են Իրանի անունը:

Լիլիթ Գալստեանը յիշեցրել է նաեւ 2020 թւականի 44-օրեայ պատերազմից յետոյ Հարաւային Կովկասում ուժերի հաւասարումները խախտելու մասին եւ նշել, որ պատերազմից յետոյ զարգացումները բերեց նրան, որ այսօր Ադրբեջանը օկուպացրած է պահում

(Շար. 7-րդ էջում)

Իրանի դերը Հայաստանի արտաքին քաղաքականութեան դիւերսիֆիկացման գործում

ՍԵՐԳԷՅ ՄԵԼՔՈՆԵԱՆ
Գիտաշխատող, ԱՊՐԻ Արմենիա

Տարածաշրջանային հին կարգը փլուզուած է, իսկ նորն ամբողջովին ձեւաւորուած չէ: Տարածաշրջանային մակարդակում տեղի ունեցող այս անցումը տեղի է ունենում նաեւ գլոբալ մակարդակում: Այս տուրբուլենտութեան ֆոնին Հայաստանը բախւում է անվտանգութեան նոր սպառնալիքների: Դրանք մեղմելու համար անհրաժեշտ է արագացնել տնտեսութեան եւ փոքր պետութիւնների ներուժի զարգացումը:

Իրանի դերը Հայաստանի հաղորդակցութիւններում

Ներուժն իրացնելու համար նախ պէտք է ուշադրութիւն դարձնել հարեւաններին: Տասնամեակներ շարունակ Հայաստանը շրջափակման մէջ է գտնուել Թուրքիայի եւ Ադրբէջանի կողմից: 1993 թւականի դեկտեմբերին Անկարան միակողմանիօրէն փակեց իր սահմանը Երեւանի հետ: 2022 թւականին Ադրբէջանն արգելափակեց Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող Լաչինի միջանցքը: Անկարայի եւ Բաքւի քայլերի հետեւողականութիւնը թոյլ է տալիս եզրակացնել, որ շրջափակման քաղաքականութիւնը Հայաստանի դէմ ուղղուած քաղաքականութեան գործիքներից մէկն է: Ուստի, սահմանների բացումը չի նշանակի, որ դրանք մի օր կրկին չեն փակուելու:

Վերջին տասնամեակների ընթացքում Վրաստանն ու Իրանը Հայաստանի համար ծառայել են որպէս պատուհան դէպի արտաքին աշխարհ: Թբիլիսիի դէպքում հայ-ռուսական յարաբերութիւնների դաշնակցային բնոյթը կարող է ազդել երկու հարեւանների յարաբերութիւնների վրայ: Ադրբէջանի եւ Թուրքիայի լայն ներգրաւածութիւնը Վրաստանի տնտեսութեան եւ էներգետիկայի ոլորտում եւս կարող է ազդել Երեւանի եւ Թբիլիսիի յարաբերութիւնների վրայ: 2020 թւականի պատերազմի ժամանակ դէպի Հայաստան զէնքի տարանցման համար օդային տարածք տրամադրելու Վրաստանի մերժումը դրա օրինակն է: Այդ պատճառով Ռուսաստանից զէնք տեղափոխող ինքնաթիռը ստիպուած եղաւ շրջանցել Վրաստանը Կասպից ծովի վրայով, որպէսզի Իրանի օդային տարածքով հասնի Հայաստան: Սակայն Ադրբէջանին Վրաստանը թոյլ է տուել օգտագործել իր օդային տարածքը՝ Թուրքիայից եւ Իսրայէլից զէնք տեղափոխելու համար:

Այսօր Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ ռազմատեխնիկական համագործակցութիւնը ցածր մակարդակի վրայ է: 2021 թւականի պայմանագրով նախատեսուած սպառազինութիւնն ու ռազմական տեխնիկան դեռեւս ամբողջութեամբ չեն մատակարարուել Հայաստան: Դիւերսիֆիկացման համատեքստում յատկանշական են Հնդկաստանի հետ յարաբերութիւնների ակտիւացման Հայաստանի ջանքերը: Իրանը նոյնպէս կարող է կարեւոր դեր խաղալ այս հարցում: Դէպի Հայաստան հնդկական զէնքի առաքման միակ երթուղին անցնում է Իրանի ցամաքային եւ օդային տարածքով: Այսօր դա միակ հնարաւոր ճանապարհն է զէնք առաքելու: Հետեւաբար, Իրանի դերը շարունակում է նշանակալի մնալ Հայաստանի ռազմական ներուժի վերականգնման համատեքստում:

Աւելին, արաբական եւ ասիական ուղղութիւնները գնալով աւելի մեծ նշանակութիւն են ստանում Հայաստանի արտաքին տնտեսական գործունէութեան մէջ. ԱՄԷ-ն եւ Չինաստանը Հայաստանի հիմնական առեւտրային գործընկերների թւում են: Բեռների առաքման ամենայարմար երթուղին իրանական նաւահանգիստներով է, որոնք Հայաստանին ելք են ապահովում դէպի համաշխարհային ովկիանոս: Այսպիսով, դիւերսիֆիկացիայի շրջանակներում, որտեղ ասիական եւ հարաւային աճող շուկաները կարող են կարեւոր տեղ զբաղեցնել, Իրանի դերը Հայաստանի հաղորդակցութիւններում արագ աճելու է:

Իրանի դերը Հայաստանի տնտեսական զարգացման եւ էներգետիկ անվտանգութեան ոլորտում

Բացի այդ, Թեհրանն առանցքային դեր է խաղում տնտեսական, տրանսպորտային եւ լոգիստիկ երթուղիներում: Հայաստանը «Հիւսիս-Հարաւ» ճանապարհի եւ «Պարսից ծոց-Սեւ ծով» տարանցիկ միջանցքի նախագծերի մի մասն է: Հայաստանի շահերի տեսանկիւնից այդ նախագծերը պէտք է Երեւանը կապեն հնդկական եւ Պարսից ծոցի երկրների շուկաների հետ, որոնց դերը նոյնպէս մեծանում է Հայաստանի արտաքին քաղաքականութեան դիւերսիֆիկացմանն ուղղուած ջանքերի շրջանակներում: Կարեւոր է Իրանի Չաբահար նաւահանգստում սեփական կամ Հնդկաստանի հետ համատեղ տերմինալի ստեղծումը: Դա կը հեշտացնի մուտքը դէպի արաբական, ասիական եւ հնդկական շուկաներ եւ կարճաժամկէտ հեռանկարում կարող է կարեւոր տնտեսական հանգոյց դառնալ Հայաստանի համար:

ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ 2023 թւականի վերջին ստորագրուած ազատ առեւտրի մասին համաձայնագիրը նոր հնարաւորութիւններ է ստեղծում նաեւ Երեւանի համար: Հայաստանը ԵԱՏՄ անդամ միակ պետութիւնն է, որն ուղիղ ցամաքային սահման ունի Իրանի հետ, իսկ Եւրասիական տնտեսական յանձնաժողովի կանխատեսումների համաձայն՝ ԵԱՏՄ-ի եւ Իրանի միջեւ ապրանքաշրջանառութիւնը կարճաժամկէտ հեռանկարում եռապատկւելու է: Նման հեռանկարը կօգնի Հայաստանին բացայայտել իր տրանզիտային ներուժը՝ կենտրոնանալով ուղղահայեաց, այլ ոչ թէ հորիզոնական երթուղիների վրայ, ինչպէս նաեւ նոր հնարաւորութիւններ կը ստեղծի տնտեսութեան համար: Օրինակ՝ Հայաստանը կարող է իր տարածքում ապրանքների եւ ծառայութիւնների արտադրութիւն հիմնել, որոնք արդիական կը լինեն ինչպէս ԵԱՏՄ անդամ պետութիւնների, այնպէս էլ Իրանի համար, որը ստորագրել է ԵԱՏՄ-ի հետ ազատ առեւտրի մասին համաձայնագիրը, ինչպէս նաեւ Հընդկաստանի համար, որը բանակցութիւններ է վարում նմանատիպ համաձայնագրի շուրջ:

Հայաստանի դիւերսիֆիկացման քաղաքականութեան իրանական ուղղութիւնը համապատասխան է նաեւ էներգետիկ ոլորտում: Այսօր գազի մեծ մասը Հայաստան է գալիս Ռուսաստանից՝ 1000 մ3-ի դիմաց 165 ԱՄՆ դոլար իջեցուած գնով: Սակայն դիւերսիֆիկացիայի կարեւորութիւնը պայմանաւորուած չէ գների բարձրացման ռիսկով: Վերջին մի քանի տարիների ընթացքում Վրաստանի տարածքով ռուսական գազի մատակարարումը ժամանակաւորապէս դադարեցւել է՝ պայմանաւորուած տարբեր հանգամանքներով, այդ թւում՝ վերականգնողական աշխատանքներով: Տարբեր գնահատականներով՝ Իրանը կարող է տարեկան մօտ 1 մլրդ. մ3 գազ մատակարարել Հայաստանին, ինչը կազմում է երկրի տարեկան սպառման կէսից աւելին: Աւելին, գազի ներկրման իրանական տարբերակը կը խթանի Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրութեան զարգացմանը, քանի որ գործելու է «գազ էլեկտրաէներգիայի դիմաց» փոխանակման բանաձեւը:

Իրանի դերը Հայաստանի անվտանգութեան ապահովման գործում

Հարաւային Կովկասում ուժերի հաւասարակշռութիւնը արմատապէս փոխւել է 2020 թւականի պատերազմից յետոյ: Ադրբէջանն ու Թուրքիան սկսել են որոշել տարածաշրջանային օրակարգը՝ ռազմական ճնշում գործադրելով Հայաստանի վրայ: 2023 թւականին Ադրբէջանի կողմից Լեռնային Ղարաբաղի գրաւումը, Երեւանի հետ որեւէ խաղաղութեան համաձայնագիր ստորագրելու Բաքւի շարունակական մերժումը, 2021-2023 թւականների ընթացքում Հայաստանի

(Շար. 6-րդ էջում)

Ուղղակի խաբկանք է, վտանգաւոր խաղ

Իշխանութիւնները հերթական անպատասխանատու ու վտանգաւոր խաղն են սկսել, որը, անկասկած, անհետեւանք չի մնայ: Արեւմուտքի թելադրանքով՝ փորձում են փոխել տարածաշրջանում ուժերի դասաւորութիւնը՝ վտանգելով նաեւ տասնամեակների ընթացքում ստեղծուած տնտեսական կապերը երբեմնի ռազմավարական գործընկերոջ հետ: Գնում են բացայայտ ու կտրուկ սրացումների, հաշուի չառնելով անգամ այն լրջագոյն սպառնալիքները, որոնց կարող ենք բախուել այդ ճանապարհին:

Իմիտացիա են անում, թէ իբր ոչ միայն սպառազինութեան ձեռքբերումը, այլեւ տնտեսութիւնն են արդէն դիւերսիֆիկացրել, վերացրել են կախւածութիւնը երբեմնի ռազմավարական գործընկերոջից:

ԱՔԽ քարտուղարը յայտարարում է, թէ 2023 թ. առաջին 9 ամսում Հայաստանի առաջատար ներդրողն այլեւս ոչ թէ Ռուսաստանն է, այլ Արաբական Միացեալ Էմիրութիւնները: ԱՄԷ-ն Հայաստանում մօտ 250 մլն. դոլար է ներդրել: Երկրորդն էլ Ռուսաստանը չէ, Հիւսեմբուրգն է: Ռուսաստանը միայն երրորդ է, այն էլ՝ 50 մլն. դոլարից քիչ ներդրումներով: Եւ սրա պատճառը, ըստ ԱՔԽ քարտուղարի, այն է, որ Ռուսաստանն է որոշել ներդրումներ չանել Հայաստանում, կամ Հայաստանը բացել է աշխարհին:

Սա ուղղակի խաբկանք է: Խաբկանք է, եթէ կարծում են, թէ ԱՄԷ-ն կարող է փոխարինել Ռուսաստանին, նոյնիսկ ներդրումների մասով: Ներդրումներով ԱՄԷ-ն իսկապէս անցած տարի առաջինն է եղել, բայց դա եղել է ընդամէնը մէկ գործարք, այն էլ՝ ֆինանսական ոլորտում: Տնտեսութեան որեւէ այլ ոլորտում ԱՄԷ ներդրումները չնչին են, զրոյին մօտ:

Մինչեւ այժմ ԱՄԷ-ից Հայաստանի տնտեսութեան մէջ ընդամէնը շուրջ 300-350 մլն. դոլարի ներդրումներ են կատարուել: Սա նոյնիսկ դրժուար է համեմատել ռուսական ներդրումների հետ, որոնք հասնում են 12-13 միլիարդի:

Փարատելու այն մտահոգութիւնները, թէ քաղաքական վեկտորի փոփոխութեան պարագայում ինչպէս են յաղթահարելու տնտեսութեան կախւածութիւնը Ռուսաստանից, վերջին շրջանում իշխանութիւնները փորձում են ցոյց տալ, իբր Ռուսաստանին փոխարինելու է գալիս ԱՄԷ-ն: Ասում են՝ ԱՄԷ-ն դարձել է Հայաստանի երկրորդ առեւտրային գործընկերը: Արտահանում-ներմուծումներն այդ երկրի հետ կտրուկ աւելացել են: Բայց չեն ասում, որ դա էլ անուղղակիօրէն կապւած է Ռուսաստանի հետ: Այն, որ Ռուսաստանից տարբեր ապրանքներ եւ յատկապէս թանկարժէք քարեր ու մետաղներ բերում-տանում են ԱՄԷ, դեռ չի նշանակում, որ տեղի է ունեցել տնտեսական կապերի, առաւել եւս՝ տնտեսութեան ու շուկաների դիւերսիֆիկացում:

Եթէ վաղը վերանան յայտնի գործօնները, որոնք նպաստել են Հայաստանի արտաքին առեւտրի երեւացող ու չերեւացող շարժերի ակտիւացմանը, այս ամբողջը փլւելու է: Փլւելու են նաեւ Հայաստանի տնտեսութեան աճերը:

Բայց խնդիրը նոյնիսկ տնտեսական աճերի մէջ չէ:

Այն, ինչ վերջին շրջանում անում են իշխանութիւնները՝ սրելով յարաբերութիւնները Ռուսաստանի հետ, իրական հակազդեցութեան վերածւելու պարագայում, հաշւած օրերի ընթացքում պարզապէս կը քանդի Հայաստանի տնտեսութիւնը: Այդ դէպքում մեզ ոչ մի ԱՄԷ էլ չի փրկի:

Չի փրկի նոյնիսկ իշխանութիւնների այդքան սիրած Արեւմուտքը՝ իր բոլոր ռեսուրսներով:

Չնայած տեսնել ենք, թէ մինչեւ հիմա ինչպէս են աշխատել այդ ռեսուրսները: Փափուկ բարձ են դրել՝ իշխանութիւնների գլխի տակ, այնինչ՝ ամէն ինչ դատարկ ու ոչինչ չտուող յայտարարութիւններից այն կողմ չի անցնում:

Հայաստանի տնտեսութեան լծակներն ինչպէս եղել, այնպէս էլ շարունակում են մնալ Ռուսաստանի տակ: Վերջին տարիներին տնտեսութեան ու տնտեսական աճի կախւածութիւնն աւելի է մեծացել: Ոչ մի հիմք չկայ այն յայտարարութիւններում, թէ իբր արտաքին շուկաների դիւերսիֆիկացում ու տնտեսութեան կախւածութեան թուլացում է տեղի ունենում: Դրանք դատարկ յայտարարութիւններ են, հիմքից զուրկ:

Ռուսաստանի անգամ այսքան խնդիրներ ունեցող տնտեսութիւնից Հայաստանի կախւածութիւնն այնքան մեծ է, որ ցանկացած փոքր հակազդեցութիւն կարող է խորը ցնցումներ առաջացնել: Դա կարող է արտայայտուել տարբեր կերպ ու տարբեր ոլորտներում: Ոլորտները շատ են՝ սկսած ռուսական շուկայում հայկական ապրանքների իրացումից, Ռուսաստանից հումքի ու էներգակիրների ներմուծումից, մինչեւ ռազմավարական որոշ ապրանքների մատակարարումներ:

Լարսում խնդիրների ստեղծման մասին դեռ չենք խօսում: Նման իրավիճակների այս ընթացքում երբեմն-երբեմն բախւել ենք ու տեսել, թէ ինչպիսի ցնցումների մէջ է յայտնւում տնտեսութիւնը:

Եթէ իշխանութիւնները որոշել են կտրուկ շրջադարձեր կատարել, մտածե՞լ են, թէ դա ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ, թէկուզ միայն տնտեսական ոլորտում: Թէ՞ կարծում են, որ ռազմավարական գործընկերների փոփոխութիւնը միայն քաղաքական է, տնտեսութիւնը զերծ է մնալու դրա հետեւանքներից:

Զարմանալի չէ, որ ռուսական կողմն արդէն խօսում է կոնկրետ գործողութիւններից:

«Այն յայտարարութիւնները, որոնք ամէն օր հնչում են Հայաստանի ղեկավարութեան շուրթերից, ստիպում են մեզ մտածել, թէ ինչ է կատարւում իրականում եւ ինչպէս դա հաշւի առնել մեր գործնական քայլերում»,- օրերս յայտարարեց ՌԴ արտգործնախարարը:

Ի՞նչ կոնկրետ գործողութիւնների

(Շար. 6-րդ էջում)

Յոբելեանական համերգ՝ նւիրւած Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախմբի հիմնադրման եւ գործունէութեան 25-ամեակին

Հովանաւորութեամբ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան եպս. Քէչէճեանի, հինգշաբթի, փետրուարի 22-ի երեկոյեան, Նոր Ջուղայի Հայ մարզա-մշակութային «Արարատ» միութեան հանդիսութիւնների դահլիճում, Ս. Ամենափրկիչ վանքի «Տաթեւ» երգչախումբը, խմբավարութեամբ մայեստրո Համիկ Ալեքսանդրեանի, հանդէս եկաւ յոբելեանական համերգով՝ նւիրւած խմբի հիմնադրման եւ գործունէութեան 25-ամեակին:

Ծրագրին ներկայ էին՝ թեմական առաջնորդ Սրբազան Հայրը, քահանայից դասը, ազգային մարմինների, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, հայոց ազգային դպրոցների եւ միութիւնների ներկայացուցիչներն ու երգարւեստի հաւատարիմ հանդիսատեսը:

Ներկաներին ողջունեց եւ խմբի վարչութեան խօսքով հանդէս եկաւ երգչախմբի վարչութեան նախագահ Վեհանուշ Խուդաբախշեանը, որում մասնաւորապէս ասւած էր. «Նոր Ջուղայի ոսկեզօծ պատմութեան էջերում, բաղձալի հպարտութեամբ ենք հանդիպում երգչախմբային արւեստը ներկայացնող խմբերին եւ նրանց խմբավարներին, որոնք ազնւօրէն եւ անշահախնդիր սիրով, վառ են պահել հայ մշակոյթի ջահը, լուսաւորելով ուղին՝ յաջորդ սերունդների համար: Այսօր եւս մեծ բերկրանքով ենք թերթում պատմութեան այն էջը, որտեղ 1999 թւականի յունւարի 14-ին, Նոր Ջուղայում հիմք դրւեց «Տաթեւ» երգչախումբը, որի մտայղացումը արծարծւեց թեմիս ժամանակի հոգեւոր առաջնորդ երջանկայիշատակ Տ. Կորիւն արք. Պապեանի կողմից եւ հաստատւեց ժամանակի Թեմական ու Կրօնական խորհուրդների միջոցով: Խմբի ղեկավարութիւնը վրստահւեց, այն օրերին Հայաստանում Կոմիտասի անւան կոնսերւատորիայում ուսանող, համայնքիս շնորհաշատ երիտասարդ երաժիշտ Համիկ Ալեքսանդրեանին»:

Վարչութեան խօսքի մի այլ բաժնում անդրադարձ էր կատարւել անցնող 25 տարիների ընթացքում թեմի Կրօնական խորհրդին ենթակայ այս երգչախմբի ծաւալուն եւ բազմաժանր աշխատանքներին, սկսած ազգային եւ կրօնական միջոցառումների երգացանկից մինչեւ տարեկան համերգների համար խմբավարի ստեղծագործութիւններին ու մշակումներին, որոնք գերազանցում են 300-ը եւ հնչել են տարբեր բեմերից:

Յաջորդիւ իրականացւեց համերգային բաժինը, որի ընթացքում հնչեցին հայկական էստրադային, աշուղական եւ ժողովրդական խմբերգեր՝ Թ. Ալթունեանի, Ալ. Սահեմեանի, Հ. Ալեքսանդրեանի, Գուսան Շահէնի, Ռ. Պետրոսեանի, Ա. Բաբաջանեանի, Յ. Բադալեանի, Ա. Մէջինեանի, Կ. Օրբէլեանի եւ Խ. Աւետիսեանի ստեղծագործութիւններից:

Յոբելեանական համերգն ընդգրկում էր նաեւ Համիկ Ալեքսանդրեանի երաժշտական հրաշալի ստեղծագործութիւններից եւ քառաձայն մշակումներից, որոնք միւս բոլոր բարձրորակ կատարումների հետ միասին, մեծ հետաքրքրութեամբ եւ գնահատանքի երկարատեւ ծափողջոյններով ընդունւեցին հանդիսատեսի կողմից:

Խմբավարը կատարել էր նաեւ երգերի գործիքաւորումը:

Յատկանշական է, որ կատարումները ընդմիջւում էին երգչախմբի 25-ամեակի առթիւ Նոր Ջուղայի, Շահինշահրի, Թեհրանի եւ արտերկրի ազգային տարբեր կառոյցներից, միութիւններից եւ անհատներից ստացւած շնորհաւորանքի ուղերձներից հատւածների ընթերցմամբ՝ երեկոյի հաղորդավար Ալինա Ալեքսանդրեանի միջոցով:

Համերգի եզրափակիչ խօսքի համար հրաւիրւեց թեմական առաջնորդ Սրբազան Հայրը, ով նախ խմբավարին յանձնեց երգչախմբի վարչութեան կողմից նախատեսւած յուշանւէրը, ապա գնահատանքով եւ երախտագիտութեամբ արտայայտւեց յաջող եւ գեղեցիկ երեկոյի կապացութեամբ:

Թեմական առաջնորդը նկատի ունենալով համերգային բաժինը «Գարնանային» երգով եզրափակւելուն, յոբելեարին նմանեցրեց գարնանային հասակի եւ տարիքի մէջ գտնւող կանաչազարդ, մշտադալար եւ գեղեցկադէմ խմբի, իսկ խմբավարին գնահատեց որպէս ստեղծագործ անձնաւորութիւն: Նա շարունակութեան մէջ ասաց. «Խօսքերի մէջ հնչեցին Տ. Կորիւն արք. Պապեանի, խմբավար Թագուշ Բաշիկեանի եւ Տ. Կոմիտաս քինյ. Թորոսեանի անունները, այս եռանկիւնի դիմաց էր, որ գործեց սիրելի Համիկը: Թո՛ղ իմ խօսքի արձագանգը հասնի՝ որպէս շնորհակալական եւ երախտիքի արտայայտութիւն՝ արեւելքից մինչեւ արեւմուտք իւրաքանչիւր անձի, ով դերակատարութիւն է ունեցել ի խնդիր խմբի բարգաւաճման»:

Երեկոն յագեցած էր նաեւ երգչախմբի անցած ուղին ներկայացնող լուսանկարների, յայտարարութիւնների, յայտագրերի, եկեղեցական զգեստների եւ երգչախմբի տարբեր ժամանակաշրջանների զգեստների ցուցահանդէսով, որի բացումը կատարւեց Սրբազան Հօր ձեռամբ:

Թղթակից (Նոր Ջուղա)
Լուսանկարիչ՝
«Գեւիկ» ստուդիա

«ՆՈՐ ՕՐ»-ԷՆ՝ «ԱԶԱՏ ՕՐ» 80 տարի ամենօրեայ ներկայութիւն

Սփիւռքահայ մամուլի արժանաւորներէն՝ յունահայ գաղութի եւ եւրոպական տարածքի միակ օրաթերթը՝ «Ազատ օր»-ը, նշեց իր հիմնադրութեան 80-րդ տարեդարձը:

Տասնամեակներու վրայ երկարող թերթի ազգային, քաղաքական, գաղափարախօսական, գրական ու հասարակական աւանդն եւ անոր ունեցած կենսական դերակատարութիւնը յունահայութեան մէջ, լուսարձակի տակ առնուեցան մարտի 2-ի երեկոյեան, «Զաւարեան» կենտրոնի «Զաքարեան-Սարաճեան» սրահներուն մէջ, ներկայութեամբ յունահայ գաղութի գործօններուն եւ աննախընթաց բազմութեան:

Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական ու քաղաքական ակունքներէն սնանող մեր թերթը, ոչ միայն քաղաքականապէս կազմաւորեց ու զարգացուց յունահայ սերունդները, այլեւ հայակերտումի, ազգակերտումի ու հայ գիրի լուսաճաճանչ փարոսը հանդիսացաւ, շնորհիւ անթիւ այն ծառայողներուն, որոնք հայ մամուլի անդաստանին մէջ դարձան «Նոր օր»-ի ու անոր յաջորդին՝ «Ազատ օր»-ի երախտաւորները, իրենց անսակարկ նուիրումի բովանդակ կարողականութիւնը մատուցելով հայ մամուլին:

«Ազատ օր»-ի 80-ամեակի շքեղ ելոյթը առիթը եղաւ նաեւ, որպէսզի երախտագիտութեան զգացումներ փոխանցին մեր օրաթերթի շարք մը նուիրեալներուն՝ յուշանուէրներու յանձնումի յուզիչ արարողութեան ընթացքին:

Ելոյթը իրենց ներկայութեամբ պատուեցին յունահայ կեանքի կառոյցներն ու մամուլի ներկայացուցիչները: Ներկայ էին յունահայոց թեմակալ առաջնորդ Տ. Գեղամ արք. Խաչերեան, Աւետարանական եկեղեցու վերապատուելի Վիգէն Չոլաքեան, Տ. Պարէտ քհնյ. Խաչերեան եւ Տ. Նարեկ քհնյ. Շահինեան, ՀՀ դեսպանատան ներկայացուցիչ տկն. Աննա Մկրտչեան, Ազգային վարչութեան ատենապետ Թագուոր Յովակիմեան եւ անդամները, ՀՅԴ Յունաստանի Կենտրոնական կոմիտէն եւ շրջաններու կոմիտէները, Հ.Կ. Խաչի, «Համազգային»-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Շրջանային ու տեղական վարչութիւնները, ՀՅԴ Երիտասարդական եւ Պատանեկան միութիւններու անդամները, ինչպէս նաեւ «Նոր Աշխարհ» եւ «Հայ Կեանք» թերթերու խմբագիրները: Սրահը բերնէ-բերան լեցուն էր մեր թերթի հաւատարիմ ընթերցողներով, բարեկամներով եւ երիտասարդ սերունդի հայրենակիցներով:

Ելոյթի մեկնարկին, ցուցադրուեցաւ վիդէոերիզ մը, ձեռնհասօրէն պատրաստուած ընկ. Ալիս Ֆուրունճեանին կողմէ:

Ճոխ նկարներով եւ նկարագրական տեսանիւթերով ներկայացուեցան «Նոր օր»-ի տարիները, ապա «Ազատ օր»-ի պատմական երթը, որպէս գաղութի սիրուած ու փնտրուած օրաթերթ: Նաեւ, հոն երեւցաւ թերթի ներկայ հրատարակութեան խմբագրական եւ տպագրական աշխատանքը:

Ելոյթի բացումը կատարեց ընկ. Քերոբ Էքիզեան, ապա բեմ հրաւիրեց ՀՅԴ Յունաստանի Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Հռիփսիմէ Յարութիւնեանը իր խօսքը ուղղելու համար: Երկու խօսքերը կը ներկայացնենք առանձին:

Յոյց տրուեցան հատուածներ երկրորդ տեսանիւթէ մը, որ պատրաստած էր «Ազատ օր»-ի 55-ամեակին առիթով: Անոր մէջ խօսեցան «Նոր օր»-ի հիմնադիր սերունդի արժանաւոր ներկայացուցիչներէն, դաշնակցական ականաւոր գործիչ Գաբրիէլ Լազեանի կողակիցը՝ Նաթալի Լազեան, թերթի առաջին գրաշարներէն Աւետուիի Թոփալեան, ինչպէս նաեւ «Ազատ օր»-ի հին ծառայողներ:

Պահը հասաւ յուշանուէրներու յանձնումին: Առաջին հերթին, բեմ հրաւիրուեցաւ «Ազատ օր»-ի 40 տարիներու նուիրեալ խմբագիր հանգուցեալ Յովսէփ Պարազեանի կողակիցը՝ Մայտա Պարազեանը, որ ՀՅԴ Կենտրոնական կոմիտէի ներկայացուցիչին եւ թերթի խմբագիրին ձեռամբ՝ յուզած ստացաւ առաջին յուշանուէրը:

Յաջորդաբար, բեմ բարձրացան ՀՅԴ Երիտմիութեան երկու անդամներ, ընկ. Լոռի Գույումճեան եւ ընկ. Ժաննա Յովսէփեան, որոնք հաղորդավարի դերով, նախ պատմական վերյիշում մը կատարեցին՝ տալով «Ազատ օր»-ի 55-ամեակի եւ 65-ամեակի ելոյթներուն պարգեւատրուած անցեալի ծառայողներու անունները: Շարունակելով, անոնք ներկայացուցին օրուան ելոյթին առիթով պարգեւատրող անձերուն՝ թերթին համար կատարած խմբագրական, վարչական, գրաշարական, տպագրական, աշխատակիցի ու ցրումի երկարամեայ աշխատանքները, անոնց ծառայութեան ու նուիրումի համապատկերը:

Յուշանուէրներ ստացան Միհրան Քիւրտօղլեան, Կիրակոս Մկրտիչեան, հանգուցեալ Շահան Ֆարաճեանին համար՝ իր որդին Փոլ Ֆարաճեան, հանգուցեալ Յակոբ Ճէլալեանին համար՝ իր դուստրը Արտա Ճէլալեան, հանգուցեալ Գեղարդ Ա քհնյ. Պապօղլեանին համար՝ երիցուհի Արաքսի Պապօղլեան, հանգուցեալ Վարագ Ա քհնյ. Յովսէփեանին համար՝ իր որդին Համբիկ Յովսէփեան, Արա Մանկոյեան, Մաննիկ Աշրեան, Սերգօ Մինասեան, հանգուցեալ Համբարձում Համբարձումեանին համար՝ իր որդին Մինաս Համբարձումեան, Ռեբեկա Պարազեանին համար՝ իր հարազատը Արմիկ Պարազեան, Մարօ Օննիկեանին համար՝ իր դուստրը Լուսի Օննիկեան, ինչպէս նաեւ հիւսիսային Յունաստանէն Անայիս Գասապեան, Աւետիս Աւետիսեան եւ Վահրամ Ղէքթաշեան, որոնք չկարողացան ներկայ գտնուիլ, ու վերջապէս՝ հանգուցեալ Մարգար Շարապխանեան:

Յուզումի մթնոլորտին մէջ, կարգ մը պարգեւատրողներ իրենց սիրտի խօսքը եւ շնորհակալութիւնը յայտնեցին եղած պատիւին համար:

Պաշտօնական յայտագիրին յաջորդեց ընկերային երեկոյ, գինիով, աղանդերներով ու հայկական երաժշտութեամբ, որուն ընթացքին տեղի ունեցան սրտաբուխ նուիրատուութիւններ թերթի ֆոնդին: Այս առիթով, բոլոր ներկաներուն տրամադրութեան տակ դրուեցան «Ազատ օր»-ի 1 մարտի բացառիկ թիւը, գինիի նմուշներ յատուկ պայուսակի մէջ, որոնց վրայ արձանագրուած էր թերթի 80-ամեակին առիթով պատրաստուած զարդանշանը, ինչպէս նաեւ 2024-ի օրացոյցէն օրինակներ:

Երեկոն վերջ գտաւ ուշ գիշեր, ուրախ ու խանդավառ մթնոլորտի մէջ:

Անեւանի գիտնական Վահագն Տատրեանի արխիւի էլեկտրոնային տարբերակը շուտով հասանելի կը լինի համացանցում

Լոս Անջելէսի «Արարատ-Էքսիճեան» հետազօտական -թանգարան եւ Հայոց Ցեղասպանութեան հետազօտական կենտրոնները միասին նախաձեռնել են թայնացնել պրոֆեսոր Վահագն Տատրեանի արխիւը:

Պրոֆ. Վահագն Տատրեանը (1926-2019) Հայոց Ցեղասպանութեան աշխարհահռչակ ուսումնասիրող գիտնական էր, որ մեծապէս նպաստել է ցեղասպանութեան պատմական իրողութեան գիտական համապարփակ ներկայացմանը՝ իր անգնահատելի ու կարեւոր նշանակութիւնն ունենալով այդ փաստի միջազգային ճանաչման եւ դատապարտման գործում:

Նա իր երկարամեայ գործունէութեան ընթացքում հաւաքել էր շատ հարուստ արխիւային նիւթեր: Նրա արխիւները ներառում են բազմահազար էջեր ամերիկեան, բրիտանական, գերմանական, ֆրանսիական, հայկական եւ օսմանեան արխիւներից, ինչպէս նաեւ բազմալեզու անտիպ նիւթեր եւ մամուլի հրապարակումներ: Մահից առաջ պրոֆեսորն իր արխիւը փոխանցել է «Արարատ-Էքսիճեան» թանգարանին, իսկ նրա գրքերի ամբողջական հաւաքածուն գտնւում է Հարաւային Կալիֆորնիայի համալսարանի Էդուարդ Տոհրն կրտսերի անուան գրադարանում:

2009 թւականին Տատրեանի արխիւը Բոստոնից փոխադրուելուց յետոյ, «Արարատ-Էքսիճեան» թանգարանը նախաձեռնեց դրանք թայնացնելու աշխատանքները՝ մասնագէտներին հասանելի դարձնելու համար: Արխիւների տեղափոխման եւ նախնական թայնացման աշխատանքները կազմակերպել եւ իրականացրել է թանգարանի տնօրէն Մակի Գոշին Մանկասարեանը, իսկ հետազօտողներին հասանելի դարձնելու նպատակով թայնացած նիւթերը բանալի բառերով փնտրելու համակարգի աշխատանքին մասնակցել է Քլարք համալսարանի դոկտ. Աննա Ալեքսանեանը՝ պրոֆ. Թաներ Աքչամի ղեկավարութեամբ: Նախատեսւում է աշխատանքներն աւարտել 2025 թւականի դեկտեմբերին, որից յետոյ արխիւն ամբողջութեամբ կը ներկայացուի համացանցով:

Alphanews.am

Անրի Վարդանով. Արուեստը նրա արեան մէջ էր



Անրի Սուրէնի Վարդանովը ծնուել է Թբիլիսիում, բայց իր ողջ գիտակցական կեանքն ապրել է Մոսկւայում: Դասաւանդել է Մոսկւայի Պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում, ինչպէս նաեւ Ռադիոյի եւ հեռուստատեսութեան հումանիտար ինստիտուտում:

1989 թւականին պաշտպանել է ատենախօսութիւն Մոսկւայի Պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետում բանասիրական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճանի համար՝ «Ֆոտոպատմագիտութեան պատկերաւոր ռեսուրսները» թեմայով:

Վարդանովն, անկասկած, լուսանկարչութեան, կինոյի, հեռուստատեսութեան պատմութեան գիտակ էր, նա բազմաթիւ հրաշալի գրքերի եւ յօդուածների հեղինակ էր, այդ թւում՝ Ջիգա Վերտովի, Սերգէյ Կոլոսովի եւ Արմէն Ջիգարխանեանի մասին:

Նա հմտօրէն կարողանում էր ստեղծել յատկապէս նշանակալի թեմաներ՝ կանխատեսելով արուեստի եւ մշակոյթի հետագայ զարգացումը, եւ մեզ սովորեցրեց անընդհատ ձեռքը պահել լրատուամիջոցների ամենաժամանակակից միտումների զարկերակին:

Վարդանովը կինոարուեստի հարցերի, հասարակութեան մէջ զանգուածային հաղորդակցութեան միջոցների գործունէութեան խնդիրների վերաբերեալ բազմաթիւ ուսումնասիրութիւնների հեղինակ է: Նա տպագրել է «Կինոյի արուեստ», «Գրականութեան հարցեր», «Թատրոն», «Արուեստ» եւ այլ ամսագրերում: Տարբեր տարիներին նա հեռուստատեսութեամբ վարել է կինոյի, լուսանկարչութեան եւ հեռուստատեսութեան խնդիրների վերաբերեալ իր հաղորդումների շարքը:

Անրի Սուրէնովիչի ստեղծագործական եւ մասնագիտական գործունէութիւնը խօսում է նրա վառ անհատականութեան մասին:

Անրի Վարդանովը մահացել է 2019 թւականի մայիսի 30-ին:

Էն, որ պիտի մեռնինք, էդ հէչ, որ պիտի Շերամ չլսենք, էդ է ցաւը



Սիրելով Գրիգոր Թալեանին ու նրա երգերը՝ ժողովուրդը կոչում է նրան ուստա Գոքոր, իսկ «մետաքսանման» իր երգերի համար բանաստեղծ Յ. Յովհաննիսեանը նրան անուանում է աշուղ Շերամ:

Աւետիք Իսահակեանը՝ գուսան Շերամի երգերի մեծ գնահատողն ու սիրողը, մի առիթով ասել է. «Էն, որ պիտի մեռնինք, էդ հէչ, որ պիտի Շերամ չլսենք, էդ է ցաւը»:

Հօր մահից յետոյ մերթ ատաղձագործի, մերթ հիւսնի, մերթ մանրավաճառի արհեստն ուսանող պատանին ինքն է պատրաստում իր առաջին սազը, թառը եւ ինքնուրոյն նւագել սովորում: Գալու էր ժամանակը, երբ կատարելապէս էր տիրապետելու աշուղական արուեստի բոլոր նրբութիւններին, եւ Շերամի երգերը հնչելու էին քաղաքում յայտնի երաժիշտների ու խմբերի կատարմամբ, նրան հրաւիրելու էին նաեւ հարսանիքների: Ինչպէս ժամանակակիցն է գրում, նրա գործունէութեան շնորհիւ Ալեքսանդրապոլի հարսանիքներում աւանդական են դառնում լարային անսամբլների ելոյթները:

Շերամի երգերի տեքստերը պարզ ու մատչելի են, հիմնականում գրուած են հայ գրական լեզուով, որը համեմուած է Շիրակի ժողովրդական բառ ու բանով եւ իւրայատուկ դարձուածքներով: Սիրոյ երգիչ Շերամի երգերում, որպէս կենտրոնական ու հիմնական կերպար հանդէս է գալիս սիրուհու կերպարը:

Սիրուհու ներքին աշխարհը շատ զուսպ է, նա հանդէս է գալիս «հազար ու մի նազերով», «չեմ ու չումերով», որի համար Շերամը նրան «անգութ հոգեհան» է անուանում, յաճախ է պատահում նաեւ «ջիգեարս խորով արիր» աւանդական դարձուածքը:

Շերամի լաւագոյն գործերից են՝ «Սարեր կաղաչեմ», «Նա մի նազ ունի», «Քեզանից մաս չունիմ», «Էլի երկինս ամպել է», «Միրուններ», «Շորորա», «Դու իմ մուսան ես», «Աննման փերի», «Թառը դոշիս» երգերը եւ այլն:

Իրաւատիրութիւն եւ պահանջատիրութիւն

Պահանջատիրութիւնը առանց իրաւատիրութեան անիմանալի է, սակայն անիկա ժամանակի ընթացքին սրբագործուած է եւ առանձին կը գործածուի։ Կը կարծեմ, որ տարբերութիւն կայ անոնց իմաստներուն եւ թելադրանքներուն միջեւ։ Պահանջելը՝ խօսակիցէ՝ հակառակորդէ կամ բարեկամէ պահանջ կենթադրէ, մինչդեռ իրաւատիրութիւնը ենթակայի գործառոյթ է։ Ինչ խօսք՝ երկուքն ալ մեր՝ անհատական թէ հաւաքական կեանքին մէջ տեղ եւ կիրառութիւն ունին։ Մինչ այդ՝ առաջարկս նրբութիւններուն շուրջ համաձայնիլն էն տարբերել եւ նկատի ունենալ զանոնք։

Անձնապէս կը հաւատամ, որ իրաւատէր մարդը կամ հաւաքականութիւնն է, որ պատրաստ է պահանջատիրութեան, իսկ հակառակ ուղղութիւնը ճիշտ տեղ չառաջնորդէր։ Եթէ իրաւունքներդ չես ճանչնար կամ հակամէտ ես մոռնալու, զիջելու, չես կրնար պահանջատէր ըլլալ, իսկ պահանջատիրութիւնն անհեթեթ է առանց իրաւունքներու իմացումին, աւելին՝ պահանջատիրութենէ իրաւատիրութիւն երթը զարտուղութիւն է տրամաբանութեան մակարդակի վրայ - իր իրաւունքներուն գիտակն է, որ կրնայ պահանջատէր ըլլալ։

Մեր ազգային դժբախտութիւններէն մին պետական իշխանութիւններու մակարդակով՝ լաւագոյն պարագային իրաւունքներու չիմացութիւնն է, իսկ վատթարագոյնն այն է, երբ գիտակցած է եւ անտեսած կամ սկիզբէն իսկ հրաժարած եւ «սեփական կէտէն» սկսած։

Պահանջատիրութեան, Հայ Դատին եւ ընդհանրապէս ազգային իրաւունքներուն հանդէպ թեթեւամիտ վերաբերմունքը աւելի քան երեսուն տարի մեր պետականութեան ուղեկիցն է եւ մայրը մեր բոլոր թերացումներուն, տկարութիւններուն եւ պարտութիւններուն։

Սակայն այս յօդուածի նպատակը անպտուղ բանավէճի յորձանքին անձնատուր ըլլալը չէ։

Դարման խորհիլը եւ կիրառելը աւելի օգտակար է այսօր եւ վաղը։ Եւ լուծումը կրթութիւնն է։

Երբ մենք կը սկսինք ցեղասպանուած ըլլալու իրողութիւնը պարզել որպէս առաջնորդող դրօշ, արդէն մեր գիտակցութեան մէջ մարդկայնօրէն անարդարուած ըլլալն է, որ հիմք կառնենք։ Մինչդեռ առաջին դիրքին վրայ պէտք է դնել ոչ միայն մարդու կեանքի իրաւունքը, այլեւ ազգայի՛նը, որուն համար պայքարի տեսակ փուլին տմարդօրէն դաւաճանուեցանք ու կոտորուեցանք։

Միջանկեալ ըսենք, որ հայը իրրեւ բանող եւ ստեղծող մարդ չէր խանգարեր իր դահիճին. խանգարողը՝ որպէս մարդկային ուրոյն հաւաքականութիւն իր նւազագոյն իրաւունքներուն ձգտումն էր, սկսելով կեանքի, պատուի եւ ինքի ապահովութենէն։ Այսինքն՝ դահիճը ցեղասպանելով ազդակ դառնալու ուղին բռնած հայն է, որ ոչնչացուց, կարծելով որ իր խնդիրները առյաւէտ լուծեց։ Սակայն այդպէս չ՚ըլլար։ Այսօր նոյն սխալը իր կրտսեր՝ գաճաճ եղբայրը՝ Ադրբէջանի բռնակալը կը կարծէ իրագործած ըլլալ։

Վերադառնալով մեր նիւթին, իրաւատիրութիւնը խթանող տրամաբանական շղթան սերունդներուն մօտ տարբեր գիտակցութիւն եւ ձգտում կը յառաջացնէ, արգելքները յաղթահարելու կամք կը կոփէ, պայքարի դաշտի պատրաստելով յանձնառու իրաւատէրը, որ ամէն ջանք գործադրելու պատրաստ պահանջատէրին նախատիպն է։

Պահանջատիրութեան ժողովրդական օժանդակն է իրաւատիրութիւնը։ Առանց իրաւատիրական լայնաճակատ աշխատանքի ու պատրաստութեան, պահանջատիրութիւնը թոյլ ու անկար կը մնայ, զի անիկա օտարին առնչուած է, իսկ օտարը՝ յաւիտեանս յաւիտենից, ունի սեփական շահերը եւ հաշիւները։ Իսկ օտարին այպանել, որ սեփական շահերը կը գերադասէ, մեզի ոչ մէկ արդիւնքի կը յանգեցնէ։

Այդ ըսել չէ անշուշտ, որ պահանջատիրութեան պէտք է դադար տալ մինչեւ իրաւատիրական դաշտը լայնայ. երբէ՛ք։ Սակայն եկէք համաձայնինք, որ պահանջատիրութեան ալ աստիճանաւորում կրնանք տալ. օտարներուն՝ անհատ թէ պետութիւն, վարժեցնել հայկական աստիճանական պահանջատիրութեան պատասխանել եւ նկատի առնել զայն, խօսոյթ փոխել, կեցուածք որդեգրել։

Օրինակի համար առնենք հայոց եւ Հայաստանի հազարամեակներու ուղեկից՝ բարեկամ Իրանի պետութիւնը։ Պետութիւն՝ որ հայոց քաղաքակրթական ժառանգութեան հոգածութիւն կը ցուցաբերէ, մինչ արեւմուտքի եւ արեւելքի թուրքերը կը քանդեն, կիւրացնեն կամ աջ ու ահեակ կը նիւրեն զանոնք։ Տարբերութիւնը մեծ է եւ նոյնքան մեծ է մեր երախտագիտութիւնը։

Քաղաքակրթական մակարդակէն անդին ունինք քաղաքական մակարդակը, ներկան։ Բնական է, որ դրական է Իրանի գծած կարմիր գիծը թուրքական զանգեզուրեան նկրտումներուն դիմաց։ Սակայն այս ամբողջ վէճին ու աղմուկին մէջ Իրանը կըրնայ շատ աւելի հատու խօսք ըսել՝ յատկապէս արեւելքի թուրքերուն՝ «Արեւմտեան Ադրբէջան»-ի մասին բարբաջանքները լռեցնելու համար։ Իրանական պետութիւնը այս հողերուն վրայ դարերով հիմնական դերակատար եղած է եւ բոլորէն լաւ գիտէ գլխաւորէն առաջ մանրուքը։

Եւ յարգելով արտաշրջանային ուժերու ներկայութեան հանդէպ Իրանի զգայնութիւնը, կը փափագինք, որ Թեհրան տէր կանգնելով իր պատմական պատասխանատուութեան՝ բարբառի եւ ծանրակշիռ իր խօսքն ըսէ Հայաստանի ու հայոց մասին, մշակոյթին ու քաղաքակրթութեան մասին, ճանչնալով ներկայ իրավիճակի ստեղծման մէջ իր պատմական դերը՝ դրական թէ բացասական։

Վէճը եթէ թրքութեան եւ հայութեան միջեւ է, իրաւարարը պէտք է նախ ճշմարտութիւնը վկայէ։ Եւ անիկա պէտք է անաչառ ըլլայ։ Եթէ Իրան պատրաստ չէ այսօր այդ դերն ստանձնելու, դատարկութիւն մը թողած պիտի ըլլայ, զոր պիտի լեցնէ մէկն ու մէկը, որ կրնայ իր ճաշակովը չըլլալ։

Այս ալ պահանջատիրութիւն է հարեւան բարեկամ պետութենէ, զոր կրնայ բաւարարել կամ անտեսել զայն, սակայն պահանջն իր գոյութեան իրաւունքը կը պահէ այնքան ժամանակ, որ չէ բաւարարուած։ Մէկը ի վերջոյ պիտի ստանձնէ իրաւարարութիւնը եւ շրջանին մէջ Հայաստանէն ետք երիցագոյնին կը վայելէ այդ բարձր դերը։

Այլապէս խաղաղութեան մասին կարելի է երկար ճառել ուժերու հաւասարակշռութեան վրայ հիմնուած ընկալեալ արժէչափերով, որոնք յարափոփոխ են եւ կայունութեան կըռուան չեն կրնար ըլլալ։

Իրաւատիրութենէն բխող պահանջատիրութիւնը նա՛ եւ այսպիսի դրսեւորում կրնայ ստանալ՝ ճկուն, սակայն տոկուն, այն գիտակցութեամբ, որ ընդհանուր դատի մը յաղթանակին պիտի ծառայէ ան։

Զաւէն Լիյլոզեան

Պահանջ ու պահանջատիրութիւն

Երբեմն հարց կը տրուի թէ ինչ է պահանջատիրութիւնը։

Այլ խօսքով – ինչպէս կարելի է բնորոշել զայն։

Պահանջատիրութիւնը լաւ ճանաչելու համար է հարկ է գիտնալ ինչ է պահանջը եւ ով է պահանջատէրը։

Պահանջը ինչ բնոյթ ունի։ Անձնական է թէ հաւաքական։ Եւ այդ պահանջը անհասանելի երազ մըն է, թէ իրականալի բաղձանք։

Այդ պահանջը հետապնդելու հոգեվիճակը ներկայ է, թէ ոչ։ Պատրաստ ես վճռական շարունակելու պահանջը կենդանի պահելու մտադրանքդ։ Եւ ի գին ամէն զոհողութեան։

Պահանջը կենդանի պահողը պահանջատէրն է։ Միայն անոր (անհատական եւ հաւաքական) ճիգով, աշխատանքով եւ կամքով է, որ կարելի կըլլայ պահել, պահպանել եւ շարունակել պահանջը։

Պահանջը – ով հայեր ազգակիցներ – միայն գրաւուած հողի վերադարձ եւ ցեղասպանութեան ճանաչում չէ, այլ հայավայել կեանք մը ապրելու աննահանջ պահանջն է նաեւ։ Մարդկայնօրէն արժանի կեանք մը՝ երբ չէ անտեսուած մարդուն ինքնութիւնը, արժանապատուութիւնը եւ ազատութիւնը։

Այլ խօսքով վերոյիշեալ մարդկային արժէքները կարելի չէ եւ պէտք չէ անտեսել կամ ոտնակոխել մեծ կամ հաւաքական պահանջի պատճառով կամ պատրւակով։

Պահանջատիրութիւնը հաւատաւոր եւ աննկուն մարդկանց կը կարոտի։ Եւ անոնք պէտք է ապրին եւ ոչ թէ մեռնին պահանջի բոցը անմար պահելու համար։ Եղեռնին յաջորդող տարիներուն պահանջատիրութիւնը լիիրաւ հայ ապրելու պահանջն ու վճռականութիւնն էր։

Եւ այդ ժամանակի պահանջատէրները շատ լաւ գիտէին իրենց դիմագրաւած մարտահրաւէրները եւ իրենցմէ սպասուած պահանջատիրութիւնը։

Այսօր արդեօք կարելի՞ է նոյն բանը ըսել։ Պահանջատիրութիւնը միայն խօսք չէ եւ ոչ ալ միայն ուրիշէն պահանջելը։

Այս հիմնական արժէքները եւ կենսական արժեչափերը պահելը եւ դաստիարակելը հայ դպրոցին եւ հայկական օջախին ճիտին պարտքն է։ Անշուշտ, եթէ կը հաւատանք, որ անոնց դերը պարզապէս գոյութեան քաշքըրտուք չէ։

Թովմաս Կորկիսեան

Իրանի...

(Շար. 3-րդ էջից)

դէմ կանոնաւոր ագրեսիան՝ զուգորդուած ռազմական հզօրութեան շարունակական աճի հետ, խօսում են Հայաստանի նկատմամբ Ադրբէջանի տարածքային նկրտումների մասին։

Այս համատեքստում Հայաստանի համար կարեւոր է ունենալ գործընկեր, որը կարող է չէզոքացնել ուժերի անհաւասարակշռութիւնը տարածաշրջանում։ Իրանը, որը մի քանի անգամ յայտարարել է տարածաշրջանային ստատուս քւոյի պահպանման անհրաժեշտութեան եւ տարածաշրջանային կոնֆիգուրացիայի փոփոխութիւնները կանխելու իր պատրաստակամութեան մասին, կարող է ստանձնել այդ դերը։ Ըստ որոշ տեղեկութիւնների՝ 2022 թւականի սեպտեմբերին Թեհրանն արդէն օգնել է կանխել Ադրբէջանի կողմից Հայաստանի դէմ աւելի լայնածաւալ ագրեսիա։ Սա ցոյց է տալիս, որ քաղաքական կամքից բացի, կան համապատասխան հնարաւորութիւններ, որոնք կարող են գործադրուել ճգնաժամային պահին։

Հայաստանի անվտանգութիւնը եւ հայ-իրանական ուղիղ սահմանի առկայութիւնը Թեհրանի համար նոյնպէս երկրի զարգացման կարեւոր պայման են։ Հակառակ դէպքում, եթէ Թուրքիան ու Ադրբէջանը Սիւնիքով միջանցք բացեն, Իրանի ողջ հիւսիսային սահմանը կը յայտնուի Թուրքիայի վերահսկողութեան տակ կամ նրա ազդեցութեան տիրոյթում։ Հետեւաբար, Թեհրանը շահագրգռուած է Սիւնիքի՝ որպէս առաւել խոցելի տարածաշրջանի ամրապընդմամբ։ Կապանում հիւպատոսութեան բացումը եւ տարածաշրջանում ներդրումային ծրագրերը, ինչպիսին է Ագարակ-Քաջարան նոր աւտոմայրուղու կառուցումը, այս տրամաբանութեամբ են իրականացւում։

Այս գործողութիւններն առաջին հերթին ուղղուած են Իրանի սահմանի հիւսիսային հատուածում կայունութեան պահպանմանը, սակայն Թեհրանի դերը Հայաստանի անվտանգութեան ապահովման գործում կարող է չսահմանափակուել միայն նման նախաձեռնութիւններով։ Համագործակցութեան հեռանկարային ուղղութիւններից է ռազմատեխնիկական համագործակցութիւնը։ Իրանական ժամանակակից սպառազինութիւնը փորձարկուել է տարբեր հակամարտութիւնների ժամանակ եւ բացի որակից, իրանական զէնքն ունի մի շարք այլ առաւելութիւններ Հայաստանի համար։ Նախ՝ իրանական ռազմարդիւնաբերական համալիրի արտադրանքը համեմատաբար էժան է։ Սա ոչ միայն մրցակցային առաւելութիւն է, այլեւ կարեւոր գործօն Հայաստանի ռազմական կարողութիւնների արագ զարգացման համար։ Երկրորդ հերթին՝ աշխարհագրական հարեւանութիւնը թոյլ է տալիս իրականացնել ինչպէս սպառազինութեան, այնպէս էլ ռազմական տեխնիկայի օպերատիւ մատակարարումներ եւ կազմակերպել տեխնիկական սպասարկում։ Եւ երրորդ՝ իրանական ռազմարդիւնաբերական համալիրի տեսականին բաւականին լայն է՝ հրետանուց եւ անօդաչու թռչող սարքերից մինչեւ ռադիոէլեկտրոնային եւ հակաօդային պաշտպանութեան համակարգեր։ Չնայած հընդկական շուկայում լայնածաւալ գնումների առաւելութիւններին, համագործակցութեան այս ոլորտը նոյնպէս պէտք է դիւերսիֆիկացուի, որպէսզի Հայաստանը կախուած չլինի բացառապէս մէկ մատակարարից։

Այսպիսով, ստեղծուել են բոլոր անհրաժեշտ նախադրեալները Իրանի հետ համագործակցութեան ընդլայնման համար, որոնցից գլխաւորը շահերի բարձր աստիճանի համընկնումն է։ Հաշուի առնելով, որ դիւերսիֆիկացիայի սկզբունքներից մէկը արտաքին քաղաքականութեան ուղղութիւնների ընդլայնումն է, Թեհրանը կարող է լինել Հայաստանի համար ամենանպատակայարմար տարբերակներից մէկը։ Միեւնոյն ժամանակ կարեւոր է Իրանը չընկալել բացառապէս որպէս տրանզիտային ուղի։ Թեհրանը կարեւոր դեր է խաղում Հարաւային Կովկասում ուժերի հաւասարակշռութեան վերականգնման գործում, ինչն այսօր բխում է Հայաստանի շահերից։

Հայաստանը կարող է մտահոգութիւններ ունենալ Իրանի հետ սերտ համագործակցութեան համար արեւմտեան պատժամիջոցների սպառնալիքի հետ կապուած, սակայն այդ մտահոգութիւնները կարող են գերագնահատուած լինել։ Նախ, Երեւանի եւ Թեհրանի միջեւ աճող առեւտրատնտեսական համագործակցութիւնը, ինչպէս նաեւ 2015-2016 թւականներին պաշտպանական ոլորտում համագործակցութեան քննարկումները լուրջ անհանգստութիւններ չեն առաջացրել Բրիւսէլի եւ Վաշինգտոնի կողմից։ Ինչպէս նաեւ, Իրանը զօրավարժութիւն անցկացնելու փորձ ունի Ադրբէջանի հետ, որը նոյնպէս չի հետեւել պատժամիջոցներով։ Աւելին, Իրանի հետ համագործակցութիւնը չի նշանակում փոխարինել տնտեսութեան եւ անվտանգութեան ոլորտում գոյութիւն ունեցող գործընկերներին, ինչը կարող է դժգոհութիւն առաջացնել Ռուսաստանի, ԵՄ-ի, ԱՄՆ-ի եւ Հնդկաստանի կողմից։ Այսպիսով, Հայաստանը դիւերսիֆիկացման իր ձգտման մէջ կարող է սահուն յարաբերութիւններ զարգացնել ուժային բոլոր կենտրոնների, այդ թւում՝ Իրանի հետ։

168.am

Ուղղակի...

(Շար.3-րդ էջից)

մասին է խօսքը, առայժմ չի ասում։ Բայց ցանկացած պարագայում դրանք ցաւոտ են լինելու՝ ինչպէս քաղաքական, այնպէս էլ՝ տնտեսական առումով։

Մեր տնտեսութիւնը, եթէ այսօր դեռ որոշ չափով կարողանում է ջրի երեսին մնալ, հիմքերը գալիս են Ռուսաստանից։ Միայն ներմուծող էներգակիրների գների հնարաւոր փոփոխութիւնները կարող են գլխիվայր շրջել տնտեսութիւնը։

Նոյնիսկ ռուսական գազի անհամեմատ մատչելի գնի պայմաններում մեր տնտեսութիւնը մի կերպ է կարողանում դիմանալ արտաքին ու ներքին շուկաների մրցակցութեանը։ Դժուար չէ պատկերացնել, թէ ինչ կարող է լինել, եթէ վաղն այդ գինը կրկնապատկուի կամ եռապատկուի։ Թէ՞ իշխանութիւններն արդէն հասցրել են այնքան սերտացնել յարաբերութիւնները Թուրքիայի ու Ադրբէջանի հետ, որ կարծում են, ռուսական գազը այլեւս կարող են փոխարինել ադրբէջանականով։

Հայաստանի տնտեսութեան ռիսկերը, որոնք կարող են առաջանալ իշխանութիւնների անպատասխանատու քայլերի հետեւանքով, բազմազան են։ Եւ սա միայն գազին չի վերաբերում։ Վերաբերում է տնտեսութեան բազմաթիւ ճիւղերին, նաեւ էներգետիկ համակարգերին, այդ թւում՝ ատոմակայանին։

Այդ ամէնը խիստ մտահոգիչ է։ Սրացումները, որոնք վերջին շրջանում բաւական բացայայտ տեսնում ենք հայ-ռուսական յարաբերութիւններում, շատ մեծ ռիսկեր են պարունակում՝ ինչպէս աշխարհաքաղաքական, այնպէս էլ՝ զուտ տնտեսական առումով։ Հայաստանի տնտեսութիւնն այս պահին բացարձակ ռեսուրս չունի նման ցնցումներին դիմանալու համար։ Արեւմուտքին դուր գալու ակնկալիքով՝ իշխանութիւնները հերթական արկածախնդրութեանն են գնում։ Նոյնիսկ մտածելն է վտանգաւոր, թէ դա ինչի կարող է յանգեցնել։

ՅԱԿՈԲ ՔՈՉԱՐԵԱՆ
168.am

ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԹԵՀՐԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԾ ՊԱՀՈՑ ԱՌԻԹՈՎ

Եկեղեցու փօնացոյցը յիշեցնում է մեզ, որ արդէն Մեծ Պահքի սեմին ենք:

Քրիստոնէական եկեղեցու կեանքում **Մեծ Պահքը զեղեցկագոյն առիթն է, որ հաւատացեալներին մղում է աղօթքով, պահեցողութեամբ եւ եկեղեցական արարողութիւնների մասնակցութեամբ՝ վերանորոգութեան եւ հաւատքի վերակենսաւորման:**

Առ այդ Մեծ Պահոց առաջին շաբաթից՝ հինգշաբթի, 15 փետրուարի 2024-ից սկսեալ Թեհրանի մեր եկեղեցիներում կատարուելու է առաւօտները՝ Արեւագալի եւ երեկոները՝ Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններն ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-

Ա- Ամէն չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին՝ Արեւագալի ժամերգութիւն՝ բոլոր եկեղեցիներում, առաւօտեան ժամը 9:00-ին, իսկ երկուշաբթիից-ուրբաթ երեկոները Խաղաղական ու Հանգստեան ժամերգութիւններ:

Բ- Ամէն երկուշաբթի օրերին՝ հերթաբար մեր բոլոր եկեղեցիներում տեղի է ունենալու Արեւագալի ժամերգութիւն առաւօտեան ժամը 9:00-ին ըստ հետեւեալ ժամանակացոյցի.-

1-Երկուշաբթի, մարտի 11-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի:**

2-Երկուշաբթի, մարտի 18-ին, 2024, առաւօտեան ժամը 9:00-ին՝ **Ս. Թարգմանչաց եկեղեցի**:

Կոչ ենք ուղղում մեր սիրելի հաւատացեալ ժողովրդի զաւակներին, որ ներկայ լինեն վերոյիշեալ արարողութիւններին, որպէսզի մեր հայրերի ապաշխարողական աղօթքներով, շարականներով եւ հոգեւոր երգերով առաւել եւս զօրանան իրենց հաւատքում:

ԴԻՒԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Մեր ջերմագին
շնորհաւորանքներն ենք յայտնում՝
պրն. Արա Շահվերդեանին
Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան կողմից պատգամաւոր ընտրուելու առթիւ:
Մաղթելով՝ քաջառողջութիւն, ուժ, եռանդ եւ յաջողութիւն Ձեզ՝ անձնական եւ գործնական կեանքում:

ԻՐԱՆԻ ՀԱՅ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆ

«Իրանի....

(Շար. 2-րդ էջից)

Հայաստանի պաշտօնական տարածքի շուրջ 240 կմ., եւ թէեւ վերջին 2-3 տարում բազմաթիւ երկրներ խօսել են Հայաստանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութիւնը յարգելու անհրաժեշտութեան մասին, սակայն այլ վստահութիւն ներշնչեց Իրանի մօտեցումները, յատկապէս, Իրանի Գերագոյն առաջնորդի արած յայտարարութիւնը՝ ժողովրդի անվտանգութեան եւ սահմանների անփոփոխութեան առնչութեամբ:

Երկու երկրների տնտեսական յարաբերութիւնների զարգացման վերաբերեալ հարցին պատասխանելով, Լիլիթ Գալստեանը նշել է, որ այդ համագործակցութիւնն աւելի մեծ ներուժ ունի, քան ներկայ իրավիճակը, եւ անհրաժեշտ է ընդլայնել այն. «Տնտեսական յարաբերութիւնները շատ կարեւոր են, սակայն ներկայումս Հայաստանի ամենամեծ խնդիրը ներքին անվտանգութիւնն է, քանի որ երկիրը կանգնած է լուրջ սպառնալիքի առաջ»,- կրկնելով միտքն ընդգծել է Լիլիթ Գալստեանը:

ԻՌՆԱ-ի զրուցակիցը յաւելել է, որ անվտանգութեան հետ կապուած խնդիրները պէտք է լուծուեն երկխօսութեամբ, ոչ թէ ռազմական գործօնի միջոցով: «Հայաստանը միշտ ողջունել է այն կառավարութիւններին, որոնք ցանկացել են միջնորդել՝ պայմանով, որ այդ երկրները չվտանգեն մեր ինքնիշխանութիւնն ու անկախութիւնը»,- նշել է նա:

Արտատարածաշրջանային ուժերի, այդ թւում ԱՄՆ-ի տարածաշրջանից դուրս գալը, ինչքանով է նպաստաւոր ճգնաժամերի նուազեցման գործում հարցին պատասխանելով, ՀՀ ԱԺ պատգամաւորը նշել է. «Մինսկի խմբի ձեւաչափով՝ ԱՄՆ-ը երկար տարիներ ներկայ է որպէս միջնորդ Ֆրանսիայի եւ Ռուսաստանի հետ միասին՝ Լեռնային Ղարաբաղի ճգնաժամի լուծման գործում, սակայն մեր խնդրանքը Ամերիկային այն է, որ խուսափի երկակի ստանդարտներից»:

Լիլիթ Գալստեանը շարունակելով միտքը, որպէս օրինակ յիշեցրել է Արցախի 44-օրեայ պատերազմի ժամանակ ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի ընդունած կեցուածքն ու լռութիւնը, յատկապէս, երբ Հելսինկեան կոնւենցիայի դրոյթներով պէտք էր արձագանգէին, սակայն բաւարարուեցին միայն յայտարարութիւն անելով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

ԱԼԻՔ
Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir

ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան

Computer AGMA
Համակարգչային ընկերութիւն
خرید و فروش کامپیوتر — سخت افزار
ارتقاء سیستم — نرم افزار
سرویس در محل — شبکه
Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ٦

ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔ

Այսու ջերմօրէն շնորհաւորում ենք
դոկտ. Արա Շահվերդեանին
եւ
դոկտ. Գեղարդ Մանսուրեանին
Իրանի Իսլամական խորհրդարանի 12-րդ նստաշրջանի ընտրութիւններում
որպէս՝ իրանահայութեան պատգամաւորներ ընտրուելու կապակցութեամբ:
Յաջողութիւն ենք մաղթում նրանց, իրենց աշխատանքներում:

ԱՐԱ ԳԱԼՍՏԵԱՆ ԵՒ ԱՆԴՐԷ ԳԱԼՍՏԵԱՆ

سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY
هواپیمایی قشم ایر Qeshm Air
نمایندگی رسمی هواپیمایی قشم ایر
شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن
Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը,
նաեւ յաւելեալ թռիչքներ
մարտի 23-ին, 27-ին եւ 31-ին (۴ – ۸ – ۱۲ فروردین)
դէպի Հայաստան եւ վերադարձ
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف
WWW.SAFARDOUSTAN.COM
۸۸۵۱۴۰۵۰

ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակուած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱԽՎԵՐԴԵԱՆԻ

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ շաբաթ, մարտի 9-ին:

Թաղումը կը կատարուի երկուշաբթի, մարտի 11-ին, ժամը 13:00-ին, Նոր Բուրասպան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ կէսօրւայ ժամը 12:00-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

ՀԱՍՑԷ՝

Մաջիդիէ, Առաջին 16-մետրանոց պող., 4-րդ փողոց, համար 16, առաջին յարկ:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան «Արցախ» սրահում:

ՍԳԱԿԻՐՆԵՐ՝

Շողիկ Միրզախանեան՝ այրին:

Յովիկ եւ Ալենուշ Հախվերդեաններ՝ որդին եւ հարսը:

Քարմէն եւ Արարատ Թահմազեաններ՝ դուստրը եւ փեսան:

Ժիլբերտ Հախվերդեան՝ որդին:

Արփինէ, Էդմոնդ եւ Մարիելլա Եղիկեաններ՝ դուստրը, փեսան եւ թոռնիկը:

Քաջունի եւ Ռութի Թահմազեաններ՝ թոռը եւ իր կինը:

Լուսինէ եւ Փաթրիկ Յովսէփեաններ՝ թոռը եւ իր ամուսինը:

Հախվերդեան, Միրզախանեան, Թադէոսեան, Թահմազեան եւ Եղիկեան ընտանիքներ՝ հարազատները եւ խնամիները:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու մեր թեմի սիրելի ժողովրդի զաւակներին եւ յատկապէս Զէյթուն քաղաքամասի մեր սիրելի ժողովրդին յայտնում ենք, որ 2024 թ. շաբաթ, մարտի 16-ին **Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, յիշատակ չարչարանացն եւ մտանելոյն ի վիրապն** տօնն է. այս տօնը համընկնում է համանուն եկեղեցու անւանակոչութեան տօնին, այս առիթով նախագահութեամբ թեմիս բարեխնամ առաջնորդ՝

ԳԵՐԾ. Տ. ՍԵՊՈՒՀ Ս. ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆԻ

շաբաթ, մարտի 16-ին 2024 թ. Զէյթուն քաղաքամասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում մատուցելու է հանդիսաւոր ս. պատարագ:

Սկիզբ ժամերգութեան	ժամը 9:00-ին
Ս. եւ անմահ պատարագ	ժամը 10:00-ին
Քարոզ	ժամը 11:00-ին

Յաւարտ ս. պատարագի տեղի է ունենալու հոգեհանգստեան յատուկ արարողութիւն եկեղեցու բարերար հանգուցեալ՝ Գրիգոր Մելիքեանի եւ Մելիքեան գերդաստանի ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:

Միրով մեր հաւատացեալ ժողովրդին հրաւիրում ենք, որ մասնակցեն յիշեալ հոգեպարար արարողութեանց եւ հաղորդուեն մեր հաւատոյ հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հաւատքի կեանքի խորհրդով:

ԴԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ

SET Coffee
فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار هاگنولیا، پلاک A117
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه ست

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک۴
تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ -۸۸۸۴۵۵۷۷
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 09 12 11932 12

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388

Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան
ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ
IRAN AIRTOUR AIRLINES
Qeshm Air
برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
Sati
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com
و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.
«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ ، ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել
«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը
(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանքով)՝ հեռաձայնով հասցէով.
Հիւսիսային Սոհրեւարդի պող., Սոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154
«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ

Հայոց....

(Շար. 1-ին էջից)

ընթացքում յանձնախմբի ատենապետ Արա Գալստեանը համապարփակ գծերով ներկայացրեց յանձնախմբի տարած աշխատանքները ընդգծելով, որ Հայոց Ցեղասպանութեան 109-րդ տարելիցի ոգեկոչման ծրագրերի այս տարւայ հիմնական նպատակը հայրենակիցներին յոյս եւ հաւատք ներշնչելն է, յոյս՝ հայ ժողովրդի ապագայի նկատմամբ, քանզի վերջին շրջանում հայ ժողովրդի դէմ ծառացած մարտահրաւէրները եւ Արցախի կորուստը հոգեբանական մեծ հարուած է հասցրել հայ ժողովրդին: Ապա նա մանրամասն զեկուցեց յանձնախմբի մինչ այժմ իրականացրած աշխատանքների, միութիւնների հետ կապերի մասին, որպէսզի նախատեսւած ծրագրերը չխաչաձեւեն միմեանց, լոգոյի յստակեցման, տարւայ կարգախօսը որոշելու, Ապրիլի 23-ի եւ 24-ի երեկոյեան Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում իրականացող ծրագրերի, ՀՈՒՍԿ-ի նախաձեռնութեամբ Ապրիլի 24-ի երեկոյեան «Արարատ» մարզաւանում կազմակերպւելիք Կենտրոնական գեղարւեստական-բանախօսական միջոցառման, Թ. Հ. Թ. Կրթական խորհրդի հետ համադրաբար աշակերտների միջոցով ծաղիկների մատուցման եւ «Արարատ» մարզաւանում բարձր օրակի աշակերտների ծրագրերի եւ նմանօրինակ աշխատանքների վերաբերեալ:

Հանդիպման ընթացքում Սրբազան Հայրը գնահատեց յանձնախմբին, ստանձնած կարեւոր պարտականութեան համար, նշելով, որ դա ապացոյցն է Ապրիլ 24-ի խորհրդի նկատմամբ յանձնախմբի գիտակից վերաբերմունքի, եւ այդ խորհրդով ժողովրդին զինելուն: Սրբազան Հայրը մէջբերում կատարեց երջանկայիշատակ Գարեգին Վեհափառի այն խօսքը, որ հայ ժողովուրդը մէկ ընդմիշտ իր բառարանից պէտք է ջնջի յուսահատւել բառը, քանի որ հայ ժողովուրդը տոկացել է եւ տոկալու է: Սրբազան Հայրը ընդգծեց, որ հայ ժողովրդի նպատակների իրականացման համար մի քանի տեսլներ են անհրաժեշտ՝ երբեք չտկարանալ մեր պայքարի մէջ, աննահանջ կերպով գործել եւ զինւած մեր հայրերի կամքով շարունակենք մեր գոյապայքարը, յանուն մեր երկրի ամբողջականութեան: Սրբազան Հայրը յաւելեց, որ մեր ժողովուրդը պահանջատէր ժողովուրդ է եւ նշեց, որ մեր իրաւունքներին վերատիրանալու գաղափարը մեզ համար դաւանանք է եւ կարեւորեց հաւատքով զինւած շարունակել առաջ ընթանալ:

Վերջում Սրբազան Հայրը յանձնախմբին յաջողութիւն մաղթեց իր առաքելութիւնը լաւագոյնս իրականացնելու առումով:

Ապա յանձնախումբը հանդիպում ունեցաւ Իսլամական խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային իրանահայութեան վերընտրւած պատգամաւոր Արա Շահվերդեանի հետ: Յանձնախմբի ատենապետը յանձնախմբի անունից նախ շնորհաւորեց պատգամաւորին՝ վերընտրւելու կապակցութեամբ եւ մանրամասն զեկուցեց յանձնախմբի տարած աշխատանքների եւ նախատեսւած ծրագրերի մասին:

Հանդիպմանը, պատգամաւոր Արա Շահվերդեանը կարեւորեց Թեմական խորհրդի միջոցով թեհրանահայ բոլոր միութիւնների ներկայացուցիչներից կեանքի կոչւած յանձնախմբի անդամների՝ որպէս մէկ մարմին համագործակցութիւնը, որը նա երաշխիքը համարեց աշխատանքների յաջողութեան: Պատգամաւորը ընդգծեց, որ Ապրիլ 24-ի ոգին, այսինքն Հայ Դատի ուղղութեամբ աշխատանքները չեն սահմանափակւում միայն մի քանի օրերի ծրագրերով եւ անհրաժեշտ համարեց այդ ոգով տոգորւած մի ամբողջ տարի աշխատանք իրականացնել:

Արա Շահվերդեանը կարեւորեց միութիւնների համադրաբար աշխատանքը, որպէսզի իրենց նախատեսւած ծրագրերը չխաչաձեւեն միմեանց եւ նման համագործակցութիւնները բնութագրեց, համայնքի միասնական ոգով ընթանալու երաշխիք: Նա ընդգծեց, որ մենք որպէս ժողովուրդ չենք կորցրել ապագայի նկատմամբ մեր յոյսը եւ անհրաժեշտ համարեց պահպանել մեր ինքնութիւնը եւ ազգային նկարագիրը եւ այն փոխանցել մեր մատաղ սերնդին:

Արա Շահվերդեանը նաեւ նշեց, որ իր հնարաւորութիւնների սահմաններում չի խնայելու ոչինչ եւ կը փորձի նեցուկ հանդիսանալ աշխատանքներին: Նա նշեց՝ ինչպէս Իսլամական խորհրդարանում իրանահայ բոլոր պատգամաւորները, ինքը եւ Սպահանի ու հարաւային իրանահայութեան պատգամաւորը աշխատելու են, որ խորհրդարանը Հայոց Ցեղասպանութեան վերաբերեալ բանաձեւ ընդունի:

Վերջում նա յաջողութիւն մաղթեց յանձնախմբին: